

## ՄՆԱԿՆԻՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

## ՆԻԿՈՒ ԱՂԲԱԼՅԱՆԸ՝ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԲԱՆ

(հայացք հին մաքենագրությանը)

Նիկոլ Աղբալյանի ստեղծագործական կյանքում իր ծանրակշիռ բաժինն ունի հայագիտության մի շարք ուղղություններին վերաբերող գիտական ժառանգությունը, որը, ցավոք, համաճառների բերումով դուրս է մնացել գիտական մեկնաբանությունների շրջանակից: Հայոց լեզվի տարաբնույթ խնդիրների մոտիվի արծարծումը, ստուգաբանական քննությունները, հայ ժողովրդի ծագմանն ու հին դպրությանն առնչվող նրա մոտեցումները այսօր էլ արդիական են իրենց համոզիչ պարզաբանումներով և գիտական ելակետերով:

Ն. Աղբալյանն անցել է գիտական ուսումնառության հարուստ դպրոց, որն ուղղակիորեն անդրադարձել է նրա աշխարհայացքային դիրքորոշումների վրա: Եվրոպայում ուսանելու տարիներին հաղորդակցվում է գիտության և արվեստի նորագույն երևույթներին, ուսումնասիրում դրանք, ամբարում խոր, հիմնավոր գիտելիքներ: Նրա կողմից լուրջ ուշադրության են արժանանում 19-րդ դարի ոգին կազմող այնպիսի տեսություններ, ինչպիսիք էին Կանտի քննադատական փիլիսոփայությունը, միևնույն ժամանակում ու իդեալիզմը, Լոկի և Հյումի տեսական ըմբռնումները, Ֆիխտեի սոցիալ-փիլիսոփայությունը, պրագմատիզմը, պոզիտիվիզմը, հոգեբանական մի շարք ուղղություններ:

Աղբալյանի գործերում մշված ուսմանը և լուրջ ուշադրությունն էր արտացոլում և գտել: Նա լայնորեն կիրառում և օգտագործում է դրանք որպես ելակետ՝ ինքնուրույն ճանապարհով, համադրման-բաղդատման մեթոդով, իր սկզբունքներին ու զաղափարներին, ճաշակին և ընկալումներին համապատասխան: Գիտական և հատկապես փիլիսոփայական ուսումնառությունը սկսում է Օգյուստ Կոնտի գրական-փիլիսոփայական երկերից, որը մի նոր աշխարհ է բացում նրա առաջ՝ գիտությունների համակարգման իր տեսությամբ. «Խիզախեցի մարդկային գիտությունն ընդգրկել՝ մեծ իմաստասերի կարգին հետևելով: Մտալ ուսողական և բնական գիտությունաց բախվների մեջ»<sup>1</sup>, - խոստովանում է նա:

Հասարակագիտության հանդեպ Ն. Աղբալյանը մինչև վերջ պահեց իր ջերմ հետաքրքրությունը: Մոլի ընթերցող էր այդ գրականության և ծանոթ՝ նրա գլխավոր ուղղություններին ու դպրոցներին: Նրան ավելի հարազատ էր ֆրանսիացի փիլիսոփա, պոզիտիվիստ Էմիլ Դյուրկհեյմի դպրոցը, որի հետևորդներից էր ֆրանսիական հասարակագիտության մեծագույն դեմքերից մեկը՝ Լևի Ռյուլը: Է. Դյուրկհեյմի և Լ. Ռյուլի տեսությունները դարձան հիմնարար ստաղծ Աղբալյանի հայագիտական-բանասիրական պրպտումների համար: Վերջին տարիների աշխատանքների՝ «Բանասերի յուշագրի» և «Հայրենիք» ամսագրում հրատարակված լեզվաբանական վերլուծությունների մեջ ընդգծված կերպով երևում են նրա գիտական մոտեցումները արծարծված հարցերի առնչությամբ: Ազդեցությո-

<sup>1</sup> Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հր. 4, Պարմություն հայոց գրականության, Պլյուս, 1970, էջ 10:



յան մույն դրոշմն է կրում ման «Պատմություն հայոց գրականության» աշխատությունը, հայոց հին մատենագրությանը վերաբերող դասախոսությունների շարքը, հայ ժողովրդական բանահյուսությանը մվիրված հարցերի քննությունը և այլն:

Ն. Աղբալյանի գիտական աշխարհայացքի վրա ուրույն ազդեցություն է թողել անգլիացի փիլիսոփա Հ. Սպենսերը: Աղբալյանը մրա աշխատություններին ծանոթանում է նույնպես թարգմանությամբ և երկար ժամանակ մնում վերջինիս գաղափարների ազդեցության ներքո, չնայած սկզբունքորեն չէր ընդունում Հ. Սպենսերի՝ կենսաբանական դրույթների կիրառումը հասարակական կյանքում: Այդուհանդերձ, Աղբալյանը խորապես օգտվել է փաստացի այն տվյալներից, որ Հ. Սպենսերը հավաքել էր իր երկերի մեջ՝ հասարակության զարգացման ընթացքը որոշելու համար. «Մարդն ապրում և կառուցում է կայունի հույսով, թեև բովանդակ տիեզերքն անկայուն է... կյանքը կայուն չէ տիեզերքի մեջ և երկրի վրա»: Այսպես է և հասարակության կյանքը, մարդկային հասարակությունը: Կայուն չէ և մշակույթը, գրականությունը: Նրանք հարաճում ձևավորման մեջ են: Ինչ որ տևում է, ընթացքի մեջ է՝ մա ունի պատմություն, այսինքն հաջորդական փուլերի մի շարան:

Աղբալյանի ստեղծագործական ուղու վրա իր ազդեցությամբ հայտնի է ֆրանսիացի փիլիսոփա, էսթետ, կուլտուր-պատմական մեթոդի հիմնադիր Հիպոլիտ Տենը: Վերջինս Օ. Կոմտի պոզիտիվիստական էվոլյուցիոնիզմի հետևորդն էր: Նրա տեսական և մեթոդական սկզբունքները իշխող դեր ունեին 19-րդ դարի եվրոպական գրականության մեջ: Ն. Աղբալյանի գրական-տեսական մի շարք դրույթներ, որոնք հիմքում ունեն Հ. Թենի սահմանումները, կրում են խոր, ստեղծագործական բնույթ: Այդ հարցերին մա անդրադառնում է «Պատմություն հայոց գրականության» գործի «ներածության մեջ՝ տալով դրանք քննական բովանդակությունում ու ձևավորման սեփական դիրքորոշումը:

Աղբալյանի տեսական և մոլի ընթերցումները ձևավորում են գիտական մոտեցումներ, որոնք հայ իրականության մեջ դրսևորման մախաղեպեր չունեն, իսկ լավագույն դեպքում՝ մոր-մոր ձևավորվում էին: Դրանք արտահայտվում են ինչպես մրա գրական-քննադատական, այնպես էլ գրապատմական երկերում: Այս տեսանկյունից ուշագրավ է «Պատմություն հայոց գրականության» աշխատության ստեղծման մախապատմությունը և մա՝ մավանդ այն սկզբունքները, որոնցով պիտի առաջնորդվեր Ն. Աղբալյանը՝ հիմք ունենալով ժամանակի մորագույն գիտա-փիլիսոփայական մոտեցումները խմորի առնչությամբ: Նրան չէին բավարարում հայոց գրականության պատմությանը մվիրված երկերը՝ Հ. Գաթրոնյանից սկսած մինչև Մ. Աբեղյան: Աբեղյանը, Աղբալյանի կարծիքով, արտակարգ հմտություն ուներ իր մյութի սահմանում, ծանոթ էր բովանդակ գրականությանը, բայց մրան և մյուններին գրականության պատմությունը գծելիս պակասում էին խորունկ և լայն հասարակագիտական հիմքերը: Աղբալյանը միակն էր մեր հայագետների շարքում, որ ժամանակի գիտա-փիլիսոփայական և սոցիոլոգիական առաջադեմ ուսմունքները կիրառում էր իր աշխատությունների մեջ: Եթե մա ավարտեր «Հայոց գրականության պատմությունը», ապա այն, անկասկած, պիտի լիներ եզակի երևույթ մեր հոգևոր մշակույթի մեջ՝ իր գաղափարներով, մտքի ինքնատիպությամբ և մեթոդով: Այն շատ կողմերով պիտի լրացներ Աբեղյանի համանուն աշխատությանը: Որպես կարևորագույն առանձնահատկություն



պետք է ընդգծել հասարակության էվոլյուցիոն զարգացման միտումների արտահայտությունը գրականության մեջ, որ Հ. Տեմի «Անգլիական գրականության պատմության» և Ա. Պիպինը «Ռուս գրականության պատմության» հիմքն է կազմում:

Աղբալյանը մինչ այդ երկու մշամավոր երկերին ծանոթանալը արդեն իսկ ձևավորել էր իր պատկերացումները, ապագա գրականության պատմության ստեղծման մախադրյալներն ու սկզբունքները, որոնք ուղղակիորեն առնչվում էին գրականության հիմնական խնդրի մկատմամբ նրա ունեցած հայացքներին: Գրականությունը, Աղբալյանի տեսանկյունից, համագային խնդիրների լուծման կարևորագույն օղակներից է, ազգային ինքնատիպության պահպանման լուրջօրինակ դրսևորում: Որքանով այն կմպաստի հասարակական, այս դեպքում՝ ազգային խնդիրների լուծմանը, համահունչ կլինի ժողովրդի ոգուն ու կենսակերպին, հոգեբանական կերտվածքին, կուրվագծի նրա իդեալի ուղիները, այնքանով շահեկան կլինի: Այս տեսանկյունից նրա հայացքների մեջ առանձնակի տեղ է զբաղեցնում ազգային ոգին և գաղափարաբանությունը գրականության միջոցով պահպանելու և սերունդներին ավանդելու միտումը:

Հայ գրականության զարգացման տրամաբանության որոշակիացման մեջ Աղբալյանը իր ժողովրդի գոյի արծարծումը և նրա մպատակային ելակետն է մշում: Այստեղից բխում է գրականության պատմական դերի ըմբռնումը: Գրողը ժողովրդի դարավոր ծառի մի մշուղն է՝ ընդունակ տալու նրա մի որոշ հատկամիշը: Մասի և ամբողջի հարաբերության պատմական ըմթացքը, իր մշգրիտ և իրական դրսևորումներով, պայմանավորում է տվյալ ժողովրդի հոգեբանությունը գեղարվեստական ձևերով կերտող գրականության արծեքն ու որակը: Մի ընդգծում, սակայն, այստեղ պետք է կարևորել: Աղբալյանը գրականության պատմական արծեքը, որ պայմանավորված էր նրա ժողովրդայնությամբ, էապես տարբերում է հանրային արծեքից. «Ոչ ամեն երկ, որ հանրային մեծ արծեք ունի, մակ իբր գրական-պատմական վաստակ մեծարծեք է», - այս բնորոշմամբ նա «գրականության ժողովրդայնություն» հասկացությունը զատում է դեմոկրատիզմից, որը, որքան էլ տեղին, բայց կարող է և ազգային չլինել: Միմչդեռ, դատելով նրա գրականագիտական ժառանգության ոգուց, Աղբալյանը ազգային գրականության զարգացման խնդիր ուներ, որի երկու թևերը՝ արևելյանն ու եվրոպականը, պիտի մեկտեղվեին՝ վերցնելով ամեն արծեքավորը, որ ստեղծել էր թե՛ եվրոպական, թե՛ Արևելքի գրական մշակույթը:

Այս ծրագիրը բնական շարունակությունն է հայ ժողովրդի ծագմանը վերաբերող նրա պատմական ուսումնասիրությունների: Աղբալյանը առաջիններից մեկն էր, որ մեր ժողովրդի ծագման հարցը կապեց հնդեվրոպական և փոքրասիական տեղական ցեղերի ձուլման հետ: Էթնիկ բազմատարրությունը, բնականաբար, իր դրոշմը պիտի դներ մակ մշակույթի վրա: Արևելք-Արևմուտք քաղաքակրթությունների սահմանում Աղբալյանը տեսնում էր իր հեռավոր նախնիների թողած պատմամշակութային ժառանգության հետքերը և գրականության մեջ էլ այդ ներկայությունը համարում էր հասկանալի ու բնական: Իր լեզվաբանական աշխատություններում Աղբալյանը բացահայտորեն առաջ է տանում այս տեսակետը՝ բերելով մի շարք փաստարկներ և ապացուցելով դրանց գիտական հավանականությունը: Սրանով պիտի բացատրել նրա ակնհայտ հետաքրքրությունը և որոշ գործնական քայլերը հիթիթների լեզվական և մշակութային ժառանգության ուսումնասիր-



ման հարցում:

Այս խնդիրների լուծմանն էր միտված նաև Աղբալյանի «Հայոց գրականության պատմությունը», որ հանգամանքների բերումով չամբողջացավ: Փոխարենը տրվեց նրա կատուցման հիմնական սկզբունքներն ու մեթոդը, որ միանգամայն նոր որակ էր հայ գրականության պատմության մեջ և իր հիմքում ուներ գրական տեսակների հաջորդական զարգացման և կարագրության ընթացքը. «Ո՛չ թե այս ինչի վեպը և այն ինչի թատերակը, այլ գացման և կարագրության ընթացքը. «Ո՛չ թե այս ինչի վեպը և այն ինչի թատերակը, այլ վեպն ու թատերակը ազգի գրականության մեջ: Մենք այսպիսով գտնում ենք մի նիւթ, որ միմիայն գրականության պատմությանն է յատուկ: Այդ նիւթը գրական տեսակների պատմությունն է, կամ որ նույնն է՝ նրանց հոլովոյթը: Գրական միատեսակ վաստակների համեմատական ուսումնասիրությամբ պետք է զատորոշուին այն երկերը, որ մի որոշ դարաշրջանում նույն այդ գրական տեսակի յօրինման և արտայայտության բարձրագույն կետն են ներկայացնում»<sup>2</sup>:

Տարանջատելով գրական պատմություն և գրականության պատմություն հասկացությունները, տալով նրանց բնորոշ գծերն ու բաղադրիչ տարրերը, ուսումնասիրության առարկան և բովանդակությունը՝ Աղբալյանը առաջինը դիտում է որպես անհրաժեշտ նյութ՝ երկրորդի կապացման համար: Նյութի հավաքական պատկերը որոշում է գրական տեսակի տեղն ու դերը. «Եւ ինչպէս անհատը երբեմն համոզում է, երբեմն խրատում, երբեմն ծաղրում է, երբեմն գովում, երբեմն դատում է, երբեմն յուզում, այնպէս էլ հաւաքական անձը, որ ազգն է՝ երբեմն իր յոյգերն յայտնում է Պ. Դուրեանի և Վ. Տերեանի երկերով, երբեմն ծաղրում է Յ. Պարոնեանի և Ե. Օտեանի երկերի մէջ, երբեմն պատմում է Հ. Մ. Չամչեանի կամ Հ. Յ. Գաթըրճեանի գործերով, երբեմն վիպում է Ծիրվանգաղէի կամ Գ. Ջոհիւրայի բերնով, երբեմն հետազօտում է իբր Հ. Յ. Տաշեան, երբեմն աղօթում իբր Գ. Նարեկացի եւ քարոզում կամ վիճաբանում իբր Գ. Տաթեւացի: Մարդկային իմացական կարողութեանց մասնացումն ու ցայտումն են հեղինակները: Դասաւորելով նրանց երկերը ժամանակի կարգով՝ կարելի է ցուցադրել այն հունները, որոնց միջով ընթացած է ազգի իմացական կեանքը: Գրականության պատմությունը մի շատ զօրատր միջոց է ազգային ինքնաճանաչութեան»<sup>3</sup> (ընդգծումը մերն է՝ Ա.Պ.):

Գրականության պատմության մեմբորինակ ներկայացումը, Աղբալյանի տեսանկյունից, հնարավորություն կընձեռնի տեսնելու ազգի հոգևոր կյանքի պատկերն իր հաջորդական փուլերով, որոշակի շրջանի մտայնությունն՝ իր ուրույն դրսևորման ձևերով, հասարակական գիտակցության աճն ու մակարդակը, կուրվագծի ապրումների և միտումների տարբեր որակներ, որ արտահայտվում են գրական հոսանքների տեսքով: Փոխակերպման այս ընթացքը իր հերթին պայման է գրականության պատկերի գծման ու բնորոշման:

Հայ գրականության զարգացումը Աղբալյանը համարում էր քաղաքական հարց և հզոր գործոն ազգային ինքնությունության պահպանման հարցում. «Մեր ազգայնությունը կառչած է ոչ թե այն ամենին, որ մարդկային է մեր մշակույթի մեջ, այլ ինչ որ ազգային է և ինքնատիպ: Այդ ուրույնությունն է, որ պետք է լաւ գիտակցենք, անոր մեջ է, որ պետք է խորապէս ներանցենք. այն է, որ պետք է խմամբով պահպանենք և երբ առիթը ներկայա-

<sup>2</sup> Նույն փնդում, էջ 76:

<sup>3</sup> Նույն փնդում, էջ 76-77:



նայ՝ պաշտպանենք մեր կեանքի գնով»<sup>4</sup>:

Գրականության պատմության ստեղծման՝ Աղբալյանի պատկերացումները ենթադրում են գրական նյութի ամբողջական ուսումնասիրություն՝ արժեվորման և դասդասման նպատակով, համգամանք, որ բավականին հեռու էր բավարար համարվելուց և գիտական ուսումնասիրությունից բացի պահանջում էր նաև համապատասխան գրացուցակների կազմում: Համառու ու տքմաքան աշխատանք, որ վեր էր մեկ մարդու կարողության սահմաններից: Ն. Աղբալյանը 1902 թ., Պետերբուրգում եղած ժամանակ, ձեռնամուխ է լինում այս կարգի մատենագիտական աշխատանքի, որի մասին խանդավառությամբ գրում է Ա.Վ. Իսահակյանին. «...Կազմում եմ մեր պարբերական մամուլի հիւթերի ցանկը և դրան զուգահեռ մի քանի ուրիշ ցանկեր. մի տեղ հաւաքում եմ այն բոլոր տեղեկությունները, որ կայ որևէ նշանակություն ունեցող անձի մասին մեր գրականութեան մէջ... մի այլ տեղ՝ որևէ գրքի մասին ինչ կայ գրած, մի ուրիշ տեսրակում ցուցակագրում եմ որևէ հեղինակի գրածը առհասարակ...»<sup>5</sup>: Համգամանքների և ծավալի բերումով այս աշխատանքը մնում է անավարտ: Սակայն մասնակի ուսումնասիրությունները ավելի են ամրապնդում նրա համոզմունքը գրականության պատմության ստեղծման՝ իր որդեգրած մեթոդի առումով: Անկասկած, հայ բանավոր ստեղծագործությանը, սրբախոսական, և գրապատմական նյութի՝ նրա անդրադարձները որոշակի միտման արտահայտություն են:

1930 թ. Ն. Աղբալյանի և Լ. Ծանթի ջանքերով Բելյուրում հիմնվում է «Համազգային» հայ կրթական ճեմարանը: Հայ գրականության պատմության և գրաբարի դասավանդումը ստանձնում է Ն. Աղբալյանը:

Տասնհինգ տարի կանոնավոր ավանդում է հայ գրականության պատմությունը՝ հնագույն շրջաններից մինչև 19-րդ դարի 80-ական թվականները: Դասընթացը կազմում է գրականության պատմության սեփական դիրքորոշումները ի մի բերելով՝ նախապես տալով գրական պատմությունը, ապա այդ հենքի վրա՝ գրականության պատմությունը՝ գրական տեսակի զարգացման հաջորդական փուլերի ներկայացմամբ: Նրա դիտարկումները, փաստական, թվական տվյալները, ներկայացված երկերի շուրջ արված վերլուծությունները, բնագրային ուղղումներն ու բանասիրական դիտողությունները կազմում են տեսրակի ավելի քան 2000 էջ: Բարեպատեն առիթով այս գրառումները ներկայացնում է որպես դասախոսություն՝ երկու հաջորդական տարիների ընթացքում ներկայացնելով հայ գրականության պատմությունը հնագույն շրջանից մինչև 7-րդ դար: Բարեբախտաբար, այս խիստ շահեկան դասախոսությունները իր ժամանակին տպագրվել են Լիբանանահայ մամուլում, իսկ 1951 թ. ամբողջացել մեկ գրքով՝ «Դասախոսություններ հայ մատենագրութեան մասին» վերնագրի ներքո ընդգրկելով հետևյալ խորագրերը. *Բանավոր ստեղծագործություն, Սրբախոսական գրականություն, Ազգաթանգեղոս, Փափստոս, Հայ գրերի գյուտը, Ոսկեդարի թարգմանական գրականությունը, Կորյուն, Եզնիկ, Կանոնական գրականություն, Ղազար Փարպեցի, Հունաբան դպրոց, Եղիշե, Զենոբ Գլակ, Հովհան Մամիկոնյան, Մովսես Խորենացի, Ծարականներ, Հովհան Մայրազունցի, Սեբեոս, Մովսես Կաղանկատվացի*: Եթե այս ցանկի սկզբում ավելացնենք նաև դեռևս 1927 թ. «Հայրենիք» ամսագրում տպա-

<sup>4</sup> Ն. Աղբալյան, Հայ մշակույթի մասին, «Ազդարար», Պեյրուք, 1946, թ. 213:

<sup>5</sup> ԳԱԹ, Աղբալյան ֆոնդ, ինքնագիր, թ. 2638:



գրած «Գողթան երգերի մասին» շարքը, ապա կուրվագծվի այն շրջան, որի հաջորդական փուլերի մեթոդիկ վերլուծությամբ Աղբալյանը կառուցում է հայոց գրականության պատմությունը: Իհարկե, այն խորապես հեռու է գրականության «լավ» պատմության՝ մրա իդեալի մարմնացումից, բայց հստակ պատկերացում է տալիս որակական այն չափանիշների մասին, որոնց արդեն անդրադարձանք:

Այս շարքի անքակտելի մասն են կազմում մրա «Ընդհանուր հայեացք հայոց գրականության վրա» և «Ե դարու գրական ըմբռնումը» հոդվածները, որոնք թեև ավելի վաղ շրջանի աշխատանքներ են (առաջինը՝ «Հորիզոն», Թիֆլիս, 1913, երկրորդը՝ «Հայրենիք», Բոստոն, 1938), սակայն տալիս են մրա տեսական ըմբռնումների առավել որոշակի պատկերը քննարկվող հարցի առնչությամբ: Այս առումով արժեքավոր է հատկապես «Ե դարու գրական ըմբռնումը», ուր քննական-վերլուծական եղանակներով հեղինակը տալիս է մի ամբողջ դարաշրջանի ըմբռնումների հիմնական ուղղությունները, որն իր պատմա-գեղարվեստական մարմնավորումն է ստանում գրականության միջոցով:

Հարազատ մնալով իր որդեգրած գրական մեթոդին՝ Աղբալյանը հայ հին դարության խնդիրներին անդրադառնալուց առաջ կարևորում է պատմական տվյալ շրջանին բնորոշ հասարակական-քաղաքական միջավայրը և որպես դրա արտահայտություն՝ հոգեբանական այն դրսևորումները, որոնք այս կամ այն կերպ իրենց արտահայտությունն են գտնում առանձին մատենագիրների երկերում: Ըստ էության, Հ. Տեմի եռաթև բանաձևի՝ կենսագրություն-ստեղծագործություն-միջավայր, կիրառմամբ Աղբալյանը ստեղծում է հայ հին գրականության պատմության իր տարբերակի մախատիպը՝ այս հենքի վրա հիմնական շեշտը դնելով 5-րդ դարին բնորոշ տրամադրությունների և հոգեբանական մոտեցումների վրա: Եվ այսպես, ի՞նչ բնութագրական կողմերով է առանձնանում 5-րդ դարի մատենագրությունը և որո՞նք են մրա հիմնական ուղղությունները: Աղբալյանի տեսանկյունից բնորոշ հատկանիշը «ծաղկեցումի ոճն» է, որ սկիզբ է առնում Կորյունից:

Կորյունի այս երկի մասին Աղբալյանը գրում է, որ առաքինի և սրբակրոն վարքի երկրավոր վարձատրությունն, այսպիսով, գովքն է, «մատենապատում երկնաբերձ պանծացումը»: Սա է Կորյունի գրական ըմբռնումը: Գրականության մատակեր գործնական է. պետք է գրել գովերգելու համար բարի գործն ու առաքինի մարդուն: Իբրև գովք ու դրվատանք այս ոճը արևելյան է՝ պարսկական, իբրև կանոն և օրինակ՝ բովանդակությամբ հայ-քրիստոնեական: Դասական շրջանի գրական չափանիշն է սա, որ զալիս է մախորդ դարից: Այդպես «ծաղկեցուցեալ» է Ս. Գրիգոր Լուսավորչի կյանքը Ագաթանգեղոսի կողմից: Փավստոսը ներդրում է վրթանեսի և Ներսես Մեծի, Վասակ, Մուշեղ և Մանվել Մամիկոնյանների կյանքը: Այս ոճի էական հատկանիշը իրական չափերի խախտումն է ու մեծացումը: Բոլորն է այդ ոճը ոչ միայն գովեստի, այլև պարսավի մեջ: Այդպես է հեթանոս միջավայրը Ագաթանգեղոսի մոտ, ուր թագավորը վերածվում է վայրի վարազի, այդպես են Մեհրուժանն ու Պապը Փավստոսի պատմության մեջ:

Պարթևական տիրապետությունը իր հետ բերել էր արևելյան ոճ: Քրիստոնեությունը մի անընդմեջ Հայաստանի և Պարսկաստանի միջև: Սակայն արևելյան հին ճաշակի և ոճի անհետացման համար դեռևս ժամանակ էր պետք: Պետք էր հայ արքունիքի քայքայումը և հունական մշակույթի զորավոր ազդեցությունը, որ «ծաղկեցումի» արևելյան



ըմբռնումը տեղի տար հումական չափազգաց ճաշակի առջև: Ազգային բարձր գիտակցության ոգին էր, որ սնունդ էր տալիս ծաղկեցումի ոճին:

Կորյունը արքայական Հայաստանի ծնունդն էր, և բովանդակ հայոց ազգի զգացումն է խոսում նրա մեջ: Ազգային գիտակցության այս հզոր թոփքն է, որ խախտում է իրականության սահմանը: Պատահական չէ, որ Աղբալյանը Կորյունին համարում է հայ ազգայնական մտայնության հիմնադիրը<sup>6</sup>: Գրական այս հոսանքը է՛լ ավելի զարգացում ապրեց գրերի գյուտից հետո, երբ թարգմանվեցին ասորական գրականության մոտիչները, և խորացավ ասորական ազդեցության չափը հայ մտավորական դասի վրա: Կորյունն այդ սերնդին էր պատկանում: Այն եկավ ոչ թե հիմն ավերելու և փոխարինելու, այլ միայն զորացնելու և տարածելու: Այս դպրոցի սանն ու ոգու կրողն են Խորենացին, Եղիշեն, 5-րդ դարի պատմագրությունն իր բովանդակ էությամբ: *Ազգային ինքնագիտակցության վերընթաց ոգին դառնում է թելադրող և առաջնորդ գրական ողջ շարժմանը, և դրան զուգընթաց գրականությունն ինքնին ձեռք է բերում որակական մոր հատկանիշներ, որ բնորոշում է մի ամբողջ դարաշրջանի մտայնությունն ու հոգևոր բովանդակությունը:*

Առանձին մատենագիրների աշխատանքները քննելիս Աղբալյանը կամա թե ակամա ակնարկում է այն առնչությունները, որոնք այս կամ այն կերպ ծառայում են հայ հին մատենագրության հիմնական խնդրի լուսաբանմանը: Գրականության պատմագիրն, անշուշտ, այս հարթության վրա չի անտեսում բանասիրական աշխատանքը, որ գրականության պատմության ստեղծման անբաժանելի մասն է: Աղբալյանը քաջածանոթ էր իր ժամանակի ո՛չ միայն հայ, այլև եվրոպական հայագիտությանը: Ն. Մառի, Յ. Մարկվարտի, Ֆ. Մակլերի, Լ. Գրեյի հայագիտական մի շարք աշխատությունների գրախոսությունները վկայությունն են նրա հիմնավոր գիտական պատրաստվածության: Գրաբարի խոր իմացությունը միջոց էր բնագրական, աղբյուրագիտական աշխատանքների համար, որ շատ դեպքերում հակադրվում էր գիտական ասպարեզում հաստատված տեսակետներին:

Բավարարված չէր հայագիտության ձեռքբերումներից և այդ հանգամանքը լուրջ խոչընդոտ էր համարում գրականության պատմության համար. «Գրականութեան պատմագրին պէտք են հաստատուն բնագիրներ և ստուգուած փաստեր, կենսագրական տեղեկութիւններ և բնագրական քննութիւններ, որ անոնց օգնութեամբ կարենայ կառուցանել իր պատմութեան շէնքը: Պայմաններու բերումով, հայոց բանասիրութիւնը լայնօրէն զարգացած չէ, որքան և մեծարժէք աշխատանք կատարուած է այդ մարզի մէջ վերջին հարիւր տարուան ընթացքին: Այնպէս որ յաճախ փոխանակ գրականութեան պատմութիւն ընելու՝ մարդ ստիպուած է բանասիրական քննութիւններու տաղտուկը հրամցնել ունկնդիրներուն»<sup>7</sup>:

Թե բանասիրական աշխատանքը ինչ ծավալներ է ընդգրկում Ն. Աղբալյանի «Դասախօսութիւններ հայ մատենագրութեան մասին» աշխատության մեջ, ընթերցողը կարող է պատկերացում կազմել՝ կարդալով շուրջ 200 էջ կազմող քննական-վերլուծական աշխատանքը: Իհարկե, ոչ բոլոր մատենագիրներն են այստեղ հավասար խորությամբ ուսումնասիրված և ներկայացված: Այս հանգամանքը, մեր տեսանկյունից, պայմանավորված է

<sup>6</sup> Տե՛ս Ն. Աղբալյան, Դեկրումներ գրերի գիտի շուրջ, «Յուսաբեր», Գահիրէ, Բացաթիկ, 1934, ք. 1:

<sup>7</sup> Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հր. 4, Պարմոնիս հայոց գրականութեան, 1938:

գյութի՝ բանավոր մատուցման իրողությամբ: Աղբայլանը հանգամանակից մանրամասնեց իր անդրադարձումն է գրապատմական այն խնդիրներին, որոնք մախ և առաջ ունեն արդիական հնչեղություն, հարազատ են գրականության պատմական դերի՝ իր ըմբռնումներին և ապա՝ կարևորվում են հայագիտության մեջ շրջանառվող վիճահարույց խնդիրներին և առկայությամբ: Այս համատեքստում մա լուրջ, գիտական անդրադարձներ է անում բանատկայությամբ: Այս համատեքստում (Ն. Ադունց, Հ. Մանանդյան, Հ. Գաթըրճյան, Մ. Օրմանյան և արևելահայ ժառանգությանը (Ն. Ադունց, Հ. Մանանդյան, Հ. Գաթըրճյան, Մ. Օրմանյան և արևելահայ ժառանգությանը) և համեմատական վերլուծության արդյունքում հանգում մոր մոտեցումների և տարբեր հիմնախնդիրների լուծման դեռևս չմեկնաբանված ելակետերի:

Այս տեսանկյունից ուշագրավ են հատկապես Ազաթանգեղոսին, Եզնիկ Կողբացուն, Եղիշեին, Զենոբ Գլակին, Մովսես Խորենացուն, Սեբեոսին մվիրված գլուխները, որոնք գրապատմական առումով արժեքավոր են գիտական խնդիրների՝ երբեմն զարմանք հարուցելու չափ մուրբ ու տարողունակ, գրական-պատմական մթնոլորտի խոր զգացողության բացահայտումներով: Աղբայլանի գրական վաստակի մի ստվար հատված, այսպիսով, դեռևս կարոտ է հիմնարար ուսումնասիրության ու արժեվորման: Մեր խնդրից դուրս սով, դեռևս կարոտ է հիմնարար ուսումնասիրության ու արժեվորման: Մեր խնդրից դուրս համարելով հարցի այդ կողմի վերլուծությունը՝ այդուհանդերձ հույս ունենք, որ ոչ ուշ ապագայում մեր բանասիրական հետազոտությունների այս ոլորտը կստանա իր լիարժեք որակումը՝ որպես մոր խոսք հայագիտության մեջ: